# ԾԻՏՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿԸ

Լ. ՏՈԼՍՏՈՅ



ՆԿԱՐՆԵՐԸ
ԼՈՒԿԻՆԱՅԻ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ 1935 ՅԵՐԵՎԱՆ

891.415
Տ-80

5390

Գեղ. խմբագիր Ա. Հայիրյան
Տեխ. խմբագիր Սերոբ Գասպարյան

ԹԱՐԳՄ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

29 JUL 2013

Պատ. 1445 տիրաժ 5000 հրատ. 2927 գլավ. 8495

891.71Ս
S-80
3976 37283



Մի անգամ բակում կանգնած, նայում եյի մեր տանիքի տակ շինված ծիծեռնակի բնին։

Հենց այդ ժամանակ յերկու ծիծեռնակներն ել թռան, գնացին և բույնը դատարկ մնաց։



Ծիծեռնակների թռչելուց հետո, տանիքից մի ծիտ թռավ, յեկավ նստեց բնի յեզրին, դես ու դեն նայեց, թևերը թափահարեց և արագ բնի մեջ մտավ։

Հետո գլուխը բնից հանեց ու ծլվլաց։



Քիչ հետո ծիծեռնակներից մեկը յեկավ բունը մտավ, բայց հենց վոր հյուրին տեսավ, ճռվողաց, թևերը թափահարեց ու թռավ, գնաց։ Ծիտը, բնի մեջ նստած, ծլվլում եր։



Մեկ ել հանկարծ մի խումբ ծիծեռնակներ յեկան· բոլորն ել մոտեցան բնին, կարծես ծտին տեսնելու համար, ու ելի թռան, գնացին։



Ծնճղուկը չվախեցավ· գլուխը դես ու դեն եր դարձնում ու ծլվլում։

Ծիծեռնակներն ելի յեկան, մոտեցան բնին, ինչ վոր բան արին ու ելի թռան գնացին։



Ծիծեռնակներն իզուր չէյին գալիս․ Նրանցից ամեն մեկը կտուցով ցեխ էր բերում և կամաց-կամաց բնի անցքը ծեփում։



Ելի գնացին, ելի յեկան ծիծեռնակները, ավելի ու ավելի ծեփեցին և անցքը փոքրանում էր ու փոքրանում։



Առաջ յերևում եր ծտի վզիկը, հետո միայն գլխիկը, հետո քթիկը, իսկ հետո՝ ել վոչինչ չերևաց:

Ծիծեռնակները բնի անցքը բոլորովին ծեփեցին և սկսեցին ճռվողելով տան շուրջը պտտվել:

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Публ. Библ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0386939

5390



Գինը 25 կոպ.

ЛЕВ. ТОЛСТОЙ

**ВОРОБЕЙ И ЛАСТОЧКА**

ГИЗ ССР Армении